

# Newsletter

Issue 4  
November 2005

# Տեղեկագիր

Թիվ 4  
Նոյեմբեր 2005

## Georgian Professors at ATC

Nine professors from the Georgian State Agricultural University including three professors from GSAU/Batumi Agricultural Institute visited ATC during November 21-24 for an education workshop initiated by Daniel Dunn, the ICARE Director, within the Georgian Higher Education Program. The group



was led by Arsen Somkhishvili, the English Teaching Project Coordinator at the Georgian State Agricultural University Tbilisi and Demna Dzirkvadze, the coordinator at Georgian State Agricultural University/Batumi Agricultural Institute.

The Georgian professors spent three intensive days actively participating in the courses provided by the ATC faculty and visiting with the staff and administration. The Georgian colleagues were very pleased with what they experienced at ATC and the State Agrarian University of Armenia on the whole. For Demna, by the way, there was little new to see since he graduated from ATC last May.

Western type practical approach to agribusiness education was the core idea that intrigued and attracted the guests most of all. "These modern approaches and the young faculty with new mentality shape the success of ATC in teaching agribusiness," said Shota Kharazishvili, Head of Studying Methodology, Batumi Agricultural Institute, "Being a part of this process even for a short period is helpful to us." Dr. Kharazishvili was pleased with the level

of knowledge of students, in particular, Georgian students as well as with the relationship between students and teachers. "We witnessed that ATC is truly a big family."

Lango Kamkia was impressed by the holistic and practical approach in the teaching process, the student and his/her knowledge being the basic interest in this system. Mr. Kamkia as well as Dr. Avtandil Lapachi also mentioned the importance of independent work the ATC students are accustomed to do in their everyday learning process.

In addition to the classes attended, the group of Georgian professors were given presentations by Dr. Dunn, ATC Faculty, Georgian students and by a mixed group of students. The presentations were very informative and motivating and covered the structure and curriculum of ATC, research and internship activities as well as the social life of the students.



The Georgian colleagues shared similar views together with their enthusiasm with the Vice Rector of the State Agrarian University of Armenia (SAUA) Yuri Marmaryan and the Dean of the Economics Department Levon Margaryan. It was not only an exchange of mutual respect and good wishes between friends but also, more importantly, an exchange of concrete ideas for further collaboration. Dr. Marmaryan and Dr. Margaryan provided an update on

*Continued on page 2*

## Կրացի դասախոսները ԱՌԿ-ում

Վրաստանի պետական գյուղատնտեսական համալսարանի ինը դասախոսներ, այդ տվում համալսարանի Բաթումի մասնաճյուղի երեք դասախոսներ, այցելեցին Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն նոյեմբերի 21-ից 24-ը: Կրթական-վերապատրաստման բնույթի



այս այցը նախաձեռնել էր Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի տնօրեն Դենիել Դանը՝ Վրաստանի Բարձրագույն կրթության զարգացման ծրագրի շրջանակներում: Դասախոսների խումբը ղեկավարում էին ՎՊԳՀ Անգլերենի ուսուցման ծրագրի համադրող Արսեն Սոմխիշվիլին և Բաթումի գյուղինստիտուտի համանման ծրագրի համադրող Դեմնա Զիրկվաձեն:

Վրացի գործընկերները երեք հագեցած օր անցկացրեցին ԱՌԿ-ում՝ ակտիվորեն մասնակցելով ԱՌԿ-ի դասախոսների վարած դասերին, ինչպես նաև հանդիպումներ ունենալով աշխատակազմի և ԱՌԿ-ի ու Հայաստանի պետական ագրարային համալսարանի ղեկավարության հետ: Նրանք գոհ էին այն ամենով, ինչ տեսան ու լսեցին մեր համալսարանում: Ի դեպ, Դեմնայի համար շատ նոր բան չկար տեսնելու, չէ որ նա ընդամենը անցած մայիսին է ավարտել ԱՌԿ-ը:

Հյուրերին առավել գրավողն ու հետաքրքրողը ագրոբիզնեսի բնագավառի կրթության հանդեպ գործնական մոտեցումն էր: «Այս արդիական մոտեցումներն ու երիտասարդ, նոր մտածելակերպ որդեգրած դասախոսներն են, որ ապահովում են ԱՌԿ-ի հաջողությունը»

*Շարունակությունը՝ 2-րդ էջում*

Continued from page 5

the current situation with SAUA and on the role of ATC in the entire system of the university . The following facts are some of the data that impressed the Georgian friends most of all. As a result of the new policy carried out by the university's administration in the recent years the share of students from rural areas make 55-70% in different depart-



ments of SAUA. The university, in association with the World Bank, publishes 20-30 research books every year. The international research magazine published by the State Agrarian University of Armenia interested the Georgian professors. They were pleased to have the Vice Rector's invitation to submit research articles to the SAUA magazine. "We need to rush to the progress," Dr. Marmaryan said, "We need to fill the

gap between the generations with these modern publications before we succeed to prepare the next generation of teachers with new skills and mentality."

Dr. Marmaryan was very precise in evaluating the role of ATC in the overall Armenian and Caucasus higher education system. "ATC students are not better than the rest of the students in the university," the Vice Rector said, "The advantage of studying at ATC is the environment created by Dr. Dunn and the rest of the faculty and staff, in which the students work more than the professors do. This is what makes ATC a wonderful joint program with Texas A&M University." According to Dr. Marmaryan, the competitive advantage that ATC graduates have in the Armenian job market is that, in addition to their modern knowledge, they easily function in English and have good communication and computer skills as compared with others.

Georgian and Armenian professors expressed the hope that the education reforms underway in the higher education systems of both countries will gradually create favorable environment for

both universities to adopt the approaches that ATC uses and be as successful.

Dr. Dunn handed out certificates of participation to the Georgian professors for their active and interested participation as well as certificates of assistance to Demna and Arsen for their excellent work in organizing the trip.

The "Georgian days" at ATC were



successful in terms of demonstrating our Georgian colleagues the US education practices. As the Georgian colleagues stated, no need to go to the US to learn these practices when the US system functions soundly here in the Caucasus. In addition, the workshop was another good opportunity for developing further cooperation between the two sister-universities. ○

Սկիզբը՝ էջ 1-ում

ագրոբիզնեսի դասավանդման բնագավառում,-ասաց Բաթումիի գյուղատնտեսական ինստիտուտի ուսուցման մեթոդաբանության բաժնի ղեկավար Շոթա Խարազիշվիլին,- Թեկուզև կարճ ժամանակով ուսումնական այսպիսի գործընթացի մեջ լինելը օգտակար էր մեզ



համար»: Դոկտ. Խարազիշվիլին գոհունակությամբ նշեց ուսանողների, մասնավորապես վրացի ուսանողների գիտելիքների, ինչպես նաև ուսանող-դասախոս հարաբերությունների բարձր մակարդակը: «Մենք ակնառես եղանք այն բանի, որ ԱՌԿ-ն իսկապես մեծ ընտանիք է»:

Երիտասարդ դասախոս Լանգո Կամկիան մեծապես տպավորվել էր ուսուցման գործընթացի համակողմանիությունից և գործնականությունից, ընդհամեն այս համակարգի կենտրոնում

Վրացի դասախոսները ԱՌԿ-ում

ուսանողն է և իր գիտելիքը: Պրն Կամկիան, ինչպես և դոկտ. Ավթանդիլ Լապաշին կարևորեցին նաև այն ինքնուրույն աշխատանքը, որ ԱՌԿ-ի ուսանողները սովոր են անելու իրենց ուսումնառության ամենօրյա գործընթացում:

Բացի դասախոսներից, վրացի դասախոսները հաճախեցին նաև մի շարք ներկայացումների՝ դոկտ. Դանի, մյուս դասախոսների, վրացի ուսանողների և ուսանողների խառը խմբերի կատարմամբ: Ներկայացումները շատ ուսանելի և ճանաչողական էին: դրանք վերաբերում էին ԱՌԿ-ի կառուցվածքին, ուսումնական պլանին, հետազոտական աշխատանքներին, արտադրական պրակտիկայի կազմակերպմանը, ինչպես նաև ուսանողների ընկերային կյանքին:

Համանման տեսակետներ, իրենց ոգևորության հետ միասին, հյուրերը փոխանակեցին Հայաստանի պետական ագրարային համալսարանի պրոռեկտոր Յուրի Մարմարյանի և տնտեսագիտության ֆակուլտետի ղեկան Լևոն Մարգարյանի հետ հանդիպման ժամանակ: Դա ոչ միայն փոխադարձ հարգանքի և բարեմաղթանքների փոխանակում էր բարեկամների միջև, այլև, որ առավել կարևոր է, հետագա գործակցության կոնկրետ գաղափարների քննարկում: Դոկտ. Մարմարյանը և դոկտ. Մարգարյանը հյուրերին ներկայացրին ՀՊԱՀ ներկա



իրավիճակը և ԱՌԿ-ի դերը համալսարանի ընդհանուր համակարգում:

Հյուրերին հետաքրքրեցին համալսարանի առաջընթացը ցույց տվող որոշ փաստեր: Մասնավորապես, վերջին տարիներին ՀՊԱՀ ղեկավարության իրականացրած քաղաքականության շնորհիվ, գյուղական վայրերից եկած ուսանողների տեսակարար կշիռը համալսարանի տարբեր ֆակուլտետներում այսօր կազմում է 55-70 տոկոս: Համալսարանը, Համաշխարհային բանկի հետ համատեղ, տարեկան 20-30 գիրք է հրատարակում: Համալսարանի հրատարակած գիտական ամսագիրը նույնպես հետաքրքրեց վրաց գործընկերներին: Նրանք գոհունակությամբ ընդունեցին պրոռեկտորի խրախուսանքը՝ ամսագրում

Շարունակությունը՝ 3-րդ էջում

Սկիզբը՝ էջ 1-ում

Վրացի դասախոսները ԱՌԿ-ում

հրապարակելու նպատակով իրենց գիտական հոդվածներն ուղարկելու վերաբերյալ: «Մեզ անհրաժեշտ է շտապել դեպի առաջընթաց,-ասաց դոկտ. Մարմարյանը,- Մենք նաև այս նոր գրականությամբ պետք է լրացնենք պրոֆեսորադասախոսական կազմը ներկայացնող սերունդների միջև եղած բացը՝ մինչև որ լիովին հաջողենք պատրաստել դասախոսների նոր սերունդ՝ նոր հմտություններով ու նոր հոգեկերտվածքով»:

Պարոն Մարմարյանը դիպուկ կերպով արժեվորեց ԱՌԿ-ի դերը Ագրարային համալսարանի, առհասարակ Հայաստանի ու Կովկասի բարձրագույն կրթության համակարգերում: «ԱՌԿ-ի ուսանողները ավելի լավը չեն, քան համալսարանի մնացած ուսանողները,-ասաց պրոֆեսորը,- ԱՌԿ-ում սովորող մեր ուսանողների առավելությունն այն միջավայրն է, որ ստեղծել են դոկտ. Դանը և մյուս դասախոսներն ու աշխատակազմը, միջավայր, որտեղ ուսանողներն ավելի շատ են աշխատում, քան դասախոսները: Ահա թե ինչն է ԱՌԿ-ը դարձնում Հայաստանի պետական ագրարային համալսարանի և Թեխասի A&M համալսարանի միջև հոյակապ համատեղ ծրագիր»: Ըստ Յուրի Մարմարյանի, հայաստանյան աշխատանքի շուկայում ԱՌԿ-ի շրջանավարտների մրցակցային առավելությունն այն է, որ, բացի արդիական գիտելիքներից, նրանք ազատ տիրապետում են անգլերենին, համակարգչին և, որ պակաս կարևոր չէ, հաղորդակցության ժամանակակից հմտություններին:

Վրացի և հայ պրոֆեսորները հույս հայտնեցին, որ երկու երկրների բարձրագույն կրթության համակարգերում ընթացող կրթական բարեփոխումները աստիճանաբար նպաստավոր միջավայր

կստեղծեն երկու բարեկամ համալսարաններում՝ որդեգրելու այն մոտեցումները, մեթոդներն ու սկզբունքները, որ այսօր հաջողությամբ կիրառում է ԱՌԿ-ը:

Եռօրյա այցի ավարտին, ICARE



հիմնադրամի տնօրեն Դանիել Դանը պատվոգրեր հանձնեց մասնակից վրացի դասախոսներին՝ ակտիվ և շահագրգիռ մասնակցության համար, իսկ Դեմնային և Արսենին՝ ուղևորության գերազանց կազմակերպման համար:

«Վրացական օրերը ԱՌԿ-ում» հաջողությամբ պսակվեցին՝ վրացի դասախոսներին ԱՄՆ կրթական փորձին հաղորդակից դարձնելու առումով: Ինչպես նկատեց մեր վրացի գործընկերներից մեկը՝ կարիք չկա ԱՄՆ գնալու, երբ ԱՄՆ կրթական համակարգը հաջողությամբ գործում է նաև Կովկասում:



Ռեկտոր Ուրուշաձեն հանդիպեց վրացի ուսանողների հետ

Գեորգի Իվանաշվիլի ԱՌԿ 4

Նոյեմբերի սկզբին Հայաստանի պետական ագրարային համալսարան կատարած իր այցի ժամանակ Վրաստանի պետական գյուղատնտեսական համալսարանի (ՎՊԳՀ) ռեկտոր Գիգո Ուրուշաձեն այցելեց ԱՌԿ-ի ուսանողներին: Լինելով ԱՌԿ-ի ուսանողներ, մենք միաժամանակ ՎՊԳՀ ուսանողներ ենք և ուրախ էինք այստեղ տեսնել մեր ռեկտորին:



Դոկտ. Ուրուշաձեի հետ մեր հանդիպումը ջերմ էր և օգտակար: Մենք քննարկեցինք ԱՌԿ-ում մեր ուսումնառությունը, ինչպես նաև ՎՊԳՀ-ում տեղի ունեցող փոփոխությունները: Ռեկտորը նորություններ պատմեց արևմտյան համակարգին անցնելու նպատակով իրականացվող ծրագրերի մասին: Ըստ դոկտ. Ուրուշաձեի, այս գործընթացը Վրաստանում կսկսվի՝ բարձր որակավորում ունեցող երիտասարդ մասնագետների հրավիրելով համալսարան, ինչպես նաև ուսուցում ապահովելով գործող պրոֆեսորադասախոսական կազմի համար:

Ռեկտոր Ուրուշաձեն բարձր գնահատեց ԱՌԿ-ում մեր ստացած կրթության որակը: Նա ասաց, որ իրենք կշարունակեն ընտրել լավագույն ուսանողներ Թբիլիսիում և Բաթումիում՝ Երևան գործուղելու համար, որպեսզի վրացի երիտասարդները, իր խոսքերով՝ առանց Կովկասյան տարածաշրջանից դուրս գալու, արևմտյան կրթություն ստանան: «Մեզ մոտ՝ Թբիլիսիում, ԱՌԿ-ում ունեցած ձեր հաջողությունների մասին

Շարունակությունը՝ 4-րդ էջում

Rector Urushadze Met with Georgian Students at ATC

By Giorgi Ivanashvili ATC 4

The Rector of the Georgian State Agricultural University (GSAU) Gizo Urushadze visited the State Agrarian University of Armenia (SAUA) in early November to participate in the Annual International Scientific Conference organized by SAUA. During his stay here in Yerevan, Dr. Urushadze visited with us, the ATC Georgian students. Being ATC students, we are at the same time students of GSAU and we were happy to see our rector.

Our meeting with Rector Urushadze was both warm and useful.

We discussed various issues on our education at ATC and GSAU future plans. The Rector updated on the new projects and ideas on shifting to western teaching methods at the Georgian Agricultural University. According to Dr. Urushadze, they will start this process by inviting more high qualified specialists to fill faculties with young and skilled professionals and by providing trainings for the existing professors.

Rector Urushadze spoke highly of the level of education provided by ATC. He said they will continue sending selected students from Tbilisi and Batumi to Yerevan to get this western educa-

tion within the Caucasus region. "Many people back in Tbilisi know that you are studying at ATC," Rector said, "And they know that this institute is a place where everyone has a chance to receive good education in agribusiness." According to Dr. Urushadze, the perspective of continuing their study here at ATC is a serious incentive for many students in Tbilisi to work hard and do their best to be selected. "Therefore, we are going to continue this wonderful project with our American and Armenian friends,"

Continued on page 4

**Սկզբը՝ էջ 1-ում**

շատերն են տեղյակ,- ասաց դոկտ. Ուռուշաձեն, - Բոլորն էլ գիտեն, որ այս հաստատությունում սովորողները հնարավորություն ունեն լավ կրթություն ստանալ ազրոբիզնեսի բնագավառում»: Ըստ պարոն Ուռուշաձեի, Հայաստանի ազրարային համալսարանի Ազրոբիզնեսի ուսուցման կենտրոնում ուսումը շարունակելու հեռանկարը Թբիլիսիում և Բաթումիում սովորող ուսանողների համար լուրջ խթան է հանդիսանում շատ աշխատելու և իրենց ամբողջ կարողությունը ի սպաս դնելու այն բանին, որ ընտրվեն ԱՌԿ-ում սովորելու համար: «Ահա թե ինչու մենք շարունակելու ենք այս հրաշալի ծրագիրը մեր հայ և ամերիկացի բարեկամների հետ»-ասաց ռեկտոր Ուռուշաձեն:

Մեր հերթին, մենք ռեկտորին տեղեկացրինք, որ մեզ լավ ենք զգում Հայաստանում և Հայաստանի պետական ազրարային համալսարանում: ԱՌԿ-ը մեզ համար ստեղծել է ամեն հնարավորություն ազրոբիզնեսի բնագավառի պրոֆեսիոնալներ դառնալու համար: Մենք համոզված ենք, որ Կրաստանի աճող ազրոբիզնեսի բնագավառում մենք վաղվա առաջնորդներն ենք լինելու, ինչպես դարձան ԱՌԿ-ի 2003 և 2005 թթ. վրացի շրջանավարտները:

Մեր հանդիպումը դոկտ. Ուռուշաձեի հետ տևեց ընդամենը 20 րոպե, բայց դրանք կարևոր 20 րոպեներ էին մեզ համար՝ հազեցած թե տեղեկատվությամբ և թե դրական հույզերով: Թբիլիսի վերադարձից առաջ դոկտ. Ուռուշաձեն շնորհակալություն հայտնեց Դանիել Դանին՝ վրացի ուսանողների համար լավագույն պայմաններ ստեղծելու համար: ○

**Continued from page 5**

Rector Urushadze said.

In turn, we informed our rector that we feel home here in Armenia. ATC has provided every possibility and favorable learning environment for us to study well and become professionals in agribusiness. We are convinced that we will become leaders in the growing Georgian agribusiness like the ATC Georgian graduates of 2003 and 2005 did.

Our meeting with Dr. Urushadze lasted only 20 minutes but those were important 20 minutes and overwhelmed with information and, why not, good emotions. Upon leaving, Dr. Urushadze thanked Dr. Daniel Dunn for doing so much for Georgian students. ○

# ATC Students Use Real Experiences to Learn Public Speaking

By Pam Karg



**Pam Karg, a volunteer from UMCOR, joined ATC in September to teach Public Speaking. Her professionalism, enthusiasm and great personality made her the best friend of her students within a short time.**

Practice, practice, practice. That phrase has become the mantra of the third-year students enrolled in ATC's Public Speaking class. And they're doing just that through a combination of academic lessons and real-life experiences.

From the course book entitled "The Art of Public Speaking," students are learning the techniques to prepare and deliver speeches. They can easily recite the types of speeches – informative, persuasive and entertaining – and they can explain why speaking up is important in a free and open society. They know how to prepare before delivering a speech and how to get over one's fears while standing before a crowd.



Yet, the students are pushed every week to go beyond the book to actually stand and deliver. It allows the students to put into action what they've learned from the book. The results are that the students have improved their English-speaking skills, their abilities to give well-organized speeches and conquered some of their public-speaking fears.

How does it work? Practice, practice, practice, the students explain.

On several occasions, they served as interpreters for their families when English-speaking people visit. In the process, the students expanded their vocabulary by finding other words to explain the original word they tried to use. The students attended an information fair organized by the Peace Corps

of America. At the event, the students talked with native-English-speaking representatives from non-governmental organizations working in Armenia. They needed to find more information about the NGOs in preparation for group presentations in class. Several decided to donate a few hours to working with Habitat for Humanity Armenia at a house, while others are contemplating volunteering with the Red Cross to work with small children in English-speaking situations. Sometimes, students create their own practice sessions spending a few hours in a cafe drinking coffee and speaking English only.

Yet, it's the zany classroom exercises that students enjoy – and even dread. Every 10 days or so, students must stand up to speak for a full minute or more. The extemporaneous situation means thinking on their feet, using the skills they've studied, practicing their English and being creative. The topics vary from paint or shoes to life in Georgia or why they find something very important. They did role-playing in small groups.

They've delivered "how to" speeches, too. The students selected their favorite hobby or a personal interest to explain, step by step, how the audience also could do it. The demon-

strations included how to make cappuccino, crochet a handbag from plastic bags, apply a bandage, bake a cake, fold paper into flowers and more.

However, ask the students what their favorite exercise has been and they'll likely say it was the day they had to roll up some newspapers and bang them on the table while they spoke loudly and expressively about any topic they wanted. It was hard for some to "let their hair down" especially since they felt they should be angry at something to elicit more depth to the emotions in the speeches. Afterwards, though, they learned that emotions come in many forms and that the exercise was just another example of how they could practice, practice, practice to become experienced, engaging public speakers. ○

# ԱՌՆԿ-ի ուսանողները բանախոսություն են սովորում իրական փորձով

## Փեմ Քարզ

**Փեմ Քարզը կամավորական է UMCOR կազմակերպությունից: Սկսած սեպտեմբեր ամսից նա բանախոսության դասընթաց է վարում ԱՌՆԿ-ում: Տիկին Քարզի արոճեստիոնալիզմը, խանդավառությունն ու առինքնող անհատականությունը կարճ ժամանակում նրան դարձրել են ուսանողների լավագույն բարեկամը:**

Փորձ, փորձ, փորձ: Այս դարձվածքը դարձել է բանախոսության դասընթացում ընդգրկված երրորդկուրսեցիների նշանաբանը, որ նրանք օգտագործում են՝ համատեղելով ակադեմիական դասընթացն ու գործնական փորձառությունը:

«Բանախոսության արվեստը» վերտառությամբ գրքից ուսանողները սովորում են ելույթներ նախապատրաստելու և ունենալու տեխնիկան: Նրանք հեշտությամբ կարող են բացատրել բանախոսության տեսակները՝ ճանաչողական, համոզիչ և զվարճալի: Կարող են նաև բացատրել, թե ազատ և բաց հասարակությունում ինչու է կարևորվում ազատ արտահայտվելու կարողությունը: Նրանք գիտեն, թե ինչպես պետք է նախապատրաստվել ելույթին և ինչպես հաղթահարել ամբոխի առջև ելույթ ունենալու վախը:



տանի տարբեր ՀԿ-ներում աշխատող բուն ամերիկացիների հետ: Նրանց անհրաժեշտ էր ավելի շատ տեղեկություններ իմանալ ՀԿ-ների մասին, որպեսզի հետագայում օգտագործեն լսարանում խմբակային ներկայացումների ժամանակ: Ուսանողներից ոմանք էլ նախընտրեցին Հարթթաթ կազմակերպության ներկայացուցիչների հետ մասնակցել մի տան շինարարությանը: Ուրիշները մտադիր են որպես կամավորներ մասնակցել Կարմիր խաչի՝ փոքրիկ երեխաների հետ կատարելիք աշխատանքներին, որի ժամանակ թարգմանելու հարկ կլինի:

Այնուամենայնիվ, լսարանային աշխույժ վարժություններից է, որ ուսանողները առավել մեծ բավականություն են ստանում, ավելին, երկյուղած վերաբերմունք ունեն դրանց նկատմամբ: Մոտավորապես տասն օրը մեկ նրանք վեր են կենում և առնվազն մեկ րոպե հանպատրաստից խոսում զանազան թեմաներով, երբեմն օգտագործելով դերաբաշխման մեթոդը:

Սակայն եթե ուսանողներին հարցնեք, թե որն է եղել նրանց սիրած վարժությունը, նրանց մեծ մասը ամենայն

հավանականությամբ կպատասխի՝ փաթաթած լրագրերով սեղանին խփելը և բարձրաձայն ու արտահայտիչ տոնով իրենց ուզած թեմայի շուրջ խոսելը: Նրանցից ոմանց համար հեշտ էր «մազերն արծակել», հատկապես այն պատճառով, որ իրենց խոսքին ավելի հուզական երանգ հաղորդելու համար իրենք ստիպված էին վրդովվել: Հետագայում, սակայն, նրանք սովորեցին, որ հույզերը կարելի է արտահայտել բազմաթիվ ձևերով և այս վարժությունը ևս մեկ լավ օրինակ է՝ հրապարակային խոսքի վարպետներ դառնալու նպատակով փորձ, փորձ, փորձ ձեռք բերելու առումով: ○



Այսուհանդերձ, ամեն շաբաթ են ուսանողներին մղում են գրքից դուրս՝ դեպի իրական կյանք՝ կանգնել մարդկանց առջև և ելույթ ունենալ: Սա նրանց թույլ է տալիս գրքից սովորածը դնել գործողության մեջ: Արդյունքը լինում է այն, որ ուսանողները բարելավում են անգլերենի իրենց իմացությունը, ճիշտ կառուցված խոսք մատուցելու կարողությունը և հաղթահարում են հրապարակային ելույթների հետ կապված իրենց վախը:



Ինչպե՞ս է այս ամենն աշխատում: Փորձ, փորձ, փորձ՝ բացատրում են ուսանողները: Երբեմն նրանցից ոմանք հանդես են գալիս որպես թարգմանիչներ, երբ տանը անգլախոս հյուրեր են ունենում: Այս ընթացքում ուսանողները ընդլայնել են իրենց բառապաշարը: Բացի այդ, ուսանողներն այցելեցին Խաղաղության կորպուսի կազմակերպած տեղեկատվական տոնավաճառին: Միջոցառման ընթացքում ուսանողները գրուցում էին Հայաս-

# Lake Sevan: Economy and Emotions

**By Gaga Nikabadze  
Nodari Pudkaradze  
ATC 4**

The beginning of the Environmental Protection course was difficult for us to understand. Thanks to our teacher Astghine Pasoyan it became one of the most favorites for the major-




ity of us, lectures on and field trip to Lake Sevan being the



crowd of this course. The trip included also a visit to the Sevan National Park. Needless to say, the trip was very interesting and informative.

Lake Sevan issue is the major environmental issue in Armenia. Sevan, one of the world's largest alpine lakes, has a major hydrological role in the country. The Lake has been doing much for Armenia. Now Armenian environmentalists set forth the question what Armenia is doing for the Lake. We were



seeking to find an answer to this question during our trip, which was twofold: we visited "with" the Lake itself, the Sevan National Park, and the Sevan Museum.

Visiting with the Lake is not a misprint; we, the Georgian students, felt this personalized outlook of Armenians towards Lake Sevan. Moreover, we felt why Armenians warmly call Sevan a sea. It is not only because Armenia is land-locked and Sevan is the largest water source for the country. Apart from economic, Sevan has also an emotional value for Armenians.

Michael Voskanov, the Ex-Director of the National Park, helped us comprehend Sevan from both angles. He

*Continued from page 5*

Continued from page 5

### Lake Sevan...

provided a great deal of information about how Sevan's watershed and the quality of water were changed over the last 25 years. According to "Uncle Misha", Lake Sevan hosts three families: salmonids, coregonids, and cyprinds. Trout, the famous Ishkhan of Sevan has a unique taste and demand for this fish is very high. Over the recent 20 years the number of Trout in Sevan decreased dramatically. Lake Sevan is also famous for its Siga, which is popular in the entire Caucasus region.

Sevan National Park is unique for its geographical location, inarguable beauty, and rare cultivars, some of which are, unfortunately, under the threat of disappearance. And the museum in the town of Sevan is another precious source of information not only about Lake Sevan but also about the history of Armenia.

Let us repeat that Sevan has economic and emotional value for Armenians. And let us add: now – for ATC Georgian students also.



## Սևանալիճ՝ տնտեսություն և հույզեր

**Քազա Նիկարածե  
Նոդարի Պուդկարածե  
ԱՌԿ 4**

Բնապահպանության դասընթացի սկիզբը դժվար էր: Սակայն, շնորհիվ դասախոս Աստղինե Պատյանի, այն աստիճանաբար դարձավ մեր ամենասիրած դասընթացներից մեկը, իսկ Սևանալիճի մասին դասախոսությունների շարքը և այցելությունը Սևան դարձավ դասընթացի թագն ու պսակը:

Ուղևորությունը չափազանց հետաքրքիր էր և ճանաչողական: Սևանալիճի հարցը Հայաստանի բնապահպանական ամենամեծ հիմնախնդիրն է: Սևանը շատ օգուտ է տվել հայերին: Այժմ հայ բնապահպանները լրջորեն առաջադրել են այն հարցը, թե Հայաստանն ինչ է անելու Սևանի համար: Մենք փորձում էինք գտնել այս հարցի պատասխանը:

Մենք «հանդիպեցինք Սևանի հետ», այցելեցինք Սևան ազգային պարկ և Սևան քաղաքի թանգարանը: «Հանդիպում Սևանի հետ» արտահայտությունը վրիպակ չէր, քանզի մենք՝ վրացի ուսանողներս, զգացինք հայերի այս անծանալորված վերաբերմունքը Սևանալիճի հանդեպ: Ավելին, մենք հասկացանք, թե ինչու են հայերը մտերմորեն Սևանն անվանում ծով: Պատճառը ոչ այնքան ծով չունենալն է, որքան այն, որ լիճը Հայաստանի ամենամեծ ջրային ռեսուրսն է, որին, անշուշտ, գումարվում է միանգամայն հասկանալի հուզական վերաբերմունքը գեղեցկուհի Սևանի նկատմամբ:

Սևան ազգային պարկի նախկին տնօրեն Միխայիլ Վոսկանովը՝ «քեռի Միշան», օգնեց մեզ ճանաչելու Սևանը այս երկու տեսանկյունից էլ՝ տնտեսական և հուզական: Նրանից մենք մեծ ծավալի տեղեկատվություն իմացանք վերջին 20 տարիների ընթացքում լճի հայելու և ջրի որակի մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին: Նա պատմեց, որ լճում բնակվում են երեք ընտանիքի ձկներ, այդ թվում հռչակավոր իշխան ձուկը, որի պաշարները վերջին 20 տարիների ընթացքում ցավալիորեն նվազել են: Սևանալիճը հայտնի է նաև իր սիգայով, որը սիրված մթերք է Կովկասյան ողջ տարածաշրջանում:

Սևան ազգային պարկը եզակի է իր աշխարհագրական դիրքով, աներկբա գեղեցկությամբ և հազվագյուտ բուսատեսակներով, որոնց մի մասը, ավաղ, ոչնչացման վտանգի տակ են: Իսկ Սևան քաղաքում գտնվող թանգարանը Սևանալիճի պատմության արժեքավոր աղբյուր է:

Սևանն այժմ մեզ՝ վրացի ուսանողների համար նույնպես թե տնտեսական և թե հուզական արժեք ունի:

### ATC Chess Tournament

**By Gia Lominadze  
ATC 4**

Part of our social life are different competitions and tournaments frequently held in ATC. Participants enjoy these events (winners enjoy prizes besides).



On November 19, an interesting chess tournament was held with 8 students participating. ATC staff members were pleased to attend the tournament and follow the games. After the first round four players remained. The second round revealed the best two. The challenge for the first place was met by David Babayan and the author of this article. David succeeded and I had to be contented with the second place. Haykaz Danielyan ranked third.

The ATC Cup went to David Babayan. Dr. Dunn delivered the trophy and welcomed the participants.

I would like to add that this kind of competition is not just games and entertainment. Chess, in particular, helps us improve our minds. My opinion is that this kind of tournament should be held more often in ATC. ○

### Շախմատի առաջնություն

**Գիա Լոմինաճե  
ԱՌԿ 4**



Մեր ընկերային կյանքի մի մասն էլ ԱՌԿ-ում անցկացվող մարզական միջոցառումներն են: Մասնակիցները բավականություն են ստանում այսպիսի միջոցառումներից, իսկ հաղթողները բավականություն են ստանում նաև մրցանակներից:

Նոյեմբերի 19-ին ութ մասնակիցների միջև տեղի ունեցավ շախմատի առաջնություն: Մենք մեր խաղով կարողացանք գոհացնել ԱՌԿ-ի աշխատակազմին: Առաջին տեղի համար պայքարն ընթացավ երրորդկուրսեցի Դավիթ Բաբայանի և տողերիս հեղինակի միջև: Ի վերջո ես ստիպված եղա հաղթանակը զիջել Դավիթին՝ բավարարվելով երկրորդ տեղով: Դավիթը նվաճեց ԱՌԿ-ի գավաթը: Հայկազ Դանիելյանը՝ երրորդ կուրսից, զբաղեցրեց մրցանակային երրորդ տեղը: Հաղթավարը հաղթողին հանձնեց և բոլորին ողջունեց տնօրեն Դենիել Դանը:

Նման մրցույթները միայն խաղ ու զվարճանք չեն: Շախմատը, մասնավորապես, օգնում է կրթելու մեր միտքը: Կուզենայի, որ այսպիսի միջոցառումներն ավելի հաճախ կազմակերպվեն ԱՌԿ-ում:

**Agribusiness Teaching Center, International Center for Agribusiness Research and Educator Foundation . 74 Teryan St., Yerevan, Armenia  
In corporation with USDA FAS, Texas A&M University, and the State Agrarian University of Armenia**

**Tel: (37410) 52-28-39, 56-95-70; Fax: (37410) 56-62-21  
E-mail: sos\_avetisyan@yahoo.com**

**Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն . Երևան, Տերյան 74**